ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԱԼԻՄԵՆՏԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱԺԻՆ

375078 ք. Երևան, Հալաբյան 41ա, հեռ. (060 ) 570-478

__Ելք 193/09__
«27» 01 2017թ.

«Կանանց աջակցման Կենտրոն»
Հասմիկ Գևորգյանին
ք. Երևան, Թումանյան փող., 21/1

Ձեզ են ուղարկվում ԴԱՀԿ ծառայության Ալիմենտի բռնագանձման Երևան քաղաքի բաժնի պետի տեղակալ Հ. Մովսեսյանի 26.01.2017թ. որոշումները կատարողական վարույթը վարույթ ընդունելու և պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին:

Խնդրում եմ նշված որոշումները հանձել պարտապան Լուսինե Սարգսի Ղաբուզյանին:

Առդիր որոշումները «2» թերթից:

ԲԱԺՆԻ ՊԵՏ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

կատ. Հ.Մովսեսյան
կ/վ 02802256

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## Կատարողական վարույթը վարույթ ընդունելու մասին

26.01.2017թ. ք. Երևան

ԴԱՀԿ ծառայության Ալիմենտի բռնագանձման Երևան քաղաքի բաժնի պետի տեղակալ Հ. Մովսեսյանս, ուսումնասիրելով ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի պետի զեկուցագիրը թիվ 02802256 կատարողական վարույթը տարածքային կատարման ուղարկելու մասին,

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23.12.2016թ. տրված թիվ ԼԴ/0853/02/16 կատարողական թերթի համաձայն պետք է արգելել Լուսինե Սարգսի Ղաբուզյանին իր մոտ պահել Կարինե Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.12.2007թ., Կարեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 23.04.2009թ. և Արեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.05.2010թ.:

Երեխաներին վերադարձնել հորը՝ պատասխանող Կարեն Էդիկի Խեչոյանին, մինչև թիվ ԼԴ/0853/02/16 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի պետը զեկուցագիր է ներկայացրել թիվ 02802256 կատարողական վարույթը տարածքային կատարման ուղարկելու վերաբերյալ, և նշված կատարողական վարույթի հետագա ընթացքի լուծումը հանձնարարվել է ինձ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածով, 32 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 02802256 կատարողական վարույթն ընդունել վարույթ և շարունակել կատարողական գործողությունները:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

**Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:**

**,,ԴԱՀԿ մասին'' ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:**

ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ Հ. ՄՈՎՍԵՍՅԱՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին

26.01.2017թ. ք. Երևան

ԴԱՀԿ ծառայության Ալիմենտի բռնագանձման Երևան քաղաքի բաժնի պետի տեղակալ, արդարադատության մայոր Հ.Մովսեսյանս, ուսումնասիրելով 26.12.2016թ. հարուցված թիվ 02802256 կատարողական վարույթի նյութերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23.12.2016թ. տրված թիվ ԼԴ/0853/02/16 կատարողական թերթի համաձայն պետք է արգելել Լուսինե Սարգսի Ղաբուզյանին իր մոտ պահել Կարինե Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.12.2007թ., Կարեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 23.04.2009թ. և Արեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.05.2010թ.:

Երեխաներին վերադարձնել հորը՝ պատասխանող Կարեն Էդիկի Խեչոյանին, մինչև թիվ ԼԴ/0853/02/16 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 62 և 71 հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Արգելել Լուսինե Սարգսի Ղաբուզյանին իր մոտ պահել Կարինե Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.12.2007թ., Կարեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 23.04.2009թ. և Արեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.05.2010թ.:

Պարտավորեցնել պարտապան Լուսինե Սարգսի Ղաբուզյանին՝ երեխաներին վերադարձնել հորը՝ պատասխանող Կարեն Էդիկի Խեչոյանին, մինչև թիվ ԼԴ/0853/02/16 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

Որոշման պահանջները ենթակա են անհապաղ կատարման:

Որոշման պահանջները չկատարելու դեպքում կկիրառվեն «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 71 և 72 հոդվածներով սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

**Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:**

**«ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:**

ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ